

ԱՒԵՏԱԲԵՐ



Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւններու

12 փետրուար 2017

ԺՁ. Տարի

Թիւ 8

Ա. ԿԻՐԱԿԻ ԱՌԱՋԱԽՈՐԷՆ ԵՏՔ



ԺԱՄԱՄՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծոյ Խօսք, եւ անմահ՝ Էութիւն, որ յանձն առիր մարմնանալ սուրբ եւ միշտ կոյս Աստուածածինէն, անփոփոխելիդ՝ մարդ դառնալով խաչուեցար, Քրիստոս Աստուած եւ մահովդ՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՝ Հօր եւ Հոգւոյն հետ փրկե՛ մեզ:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԴԿ.

Որ անբաւ յաղթական զօրութեամբ Թագաւոր եւ երկնքի ու երկրի, Քրիստոս Աստուած, կ'օրհնաբանենք քեզ:

Որ Հօր փառակից ըլլալով՝ օրհնուած եւ անմահներէն եւ խոնարհելով մարմին առիր, Քրիստոս Աստուած, կ'օրհնաբանենք քեզ:

Որ մեծ զօրութեամբ մահը ոտնակոխ ըրիր եւ յարութիւն առնելով՝ լուսաւորեցիր սուրբ Եկեղեցին, անմահ Էութիւն, կ'օրհնաբանենք քեզ:

ՄԵՍԵՐԻ (Սղմ. 64, 2 եւ 3)

Աստուած իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը պայելէ եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թո՛ղ բարձրանան:

Աղօթքներս լսէ՛, եւ ամէն մարմնաւոր էակ՝ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:


ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Պօղոս Առաքեալին Տիմոթէոսին ուղղած Բ. Թուղթէն Է ընթերցուածը.
(2. Տիմ. 3, 1-15)

Գիտցիր Նաեւ որ վերջին օրերուն դժուար ժամանակներ պիտի գան: Մարդիկ եսասեր պիտի ըլլան, դրամասեր, հպարտ, ամբարտաւան, շատախօս, ըմբոստ՝ ծնողներու դէմ, ապերախտ, սըրբապիղծ, անգութ, բանասարկու, անժուժկալ, վէս անբարեսեր, մատնիչ, լիրբ, կուրցած՝ ամբարտաւանութեամբ, աւելի բարեկամ հաճոյասիրութեան քան Աստուծոյ: Ունենալով աստուածպաշտութեան միայն երեւոյթները, պիտի ուրանան ինչ որ անոր ոյժն է: Հեռացի՛ր Նաեւ այդպիսիներէն:

Անոնցմէ են, որոնք կը սպրդին տուներէն ներս, կը գերեն թեթեւամիտ եւ մեղսապարտ կիները, որոնք տարուած ամէն տեսակ ցանկութիւններէ, միշտ կը սորվին եւ երբեք չեն հասնիր ճշմարտութեան գիտութեան: Ինչպէս Յանես եւ Յամբէս հակառակեցան Մովսէսի, այնպէս ալ ասոնք կը հակառակին ճշմարտութեան, մարդիկ, որոնք մտքով ապականած են եւ հաւատքի մէջ՝ անհաստատ: Բայց աւելի առաջ պիտի չկարենան երթալ, որովհետեւ անոնց յիմարութիւնը պիտի քօղագերծուի, ինչպէս եղաւ միւս երկուքինը:

Իսկ դուն, հետեւեցար իմ վարդապետութեանս, առաջնորդութեանս, ծրագիրներուս, հաւատքիս, համբերութեանս, սիրոյս, յարատեւութեանս, հալածանքներուս, նեղութիւններուս, զորս կրեցի Աստիոք, Իկոնիոն, Լիւստրոս: Որքան հալածանքներ կրեցի, սակայն Տէրը փրկեց գիս: Այո՛, անոնք, որոնք կ'ուզեն աստուածպաշտութեամբ ապ-



րիլ Քրիստոսի մէջ, պիտի հալածուին: Իսկ մեղաւորներն ու կախարդները աւելի առաջ պիտի երթան չարութեան մէջ, մոլորած են եւ ուրիշներ ալ պիտի մոլորեցնեն:

Իսկ դուն հաստատ մնացիր սորվածիդ մէջ եւ որուն հաւատարիմ եղար: Գիտես, թէ որմէ՛ սորվեցար գայն: Որովհետեւ մանկութենէդ ի վեր գիտես Սուրբ Գիրքը: Ան կարող է քեզի տալ իմաստութիւն, որ հաւատքով ի Քրիստոս Յիսուս, կ'առաջնորդէ դէպի փրկութիւն:

Ալելուիա, Ալելուիա,

Աստուած հազիւ յայտնուի՝ իր բոլոր թշնամիներն ալ պիտի ցրուին, զինքը ատողները՝ ամենքն ալ իր առջեւէն պիտի փախչին:


(Սղմ. 67, 2)

Ալելուիա:

ԱՒԵՏԱՐԱՆ

ՅԻՍՈՒՍ՝ ԿԵԱՆՔԻ ՉԱՅ (Յովհ. 6, 22-38)

Յաջորդ օրը, միւս ափին վրայ մնացած ժողովուրդը անդրադարձաւ, թէ հոն ուրիշ նաւակ չկար, բացի անկէ, ուր մտան աշակերտները, եւ թէ Յիսուս նաւակ չէր ելած եւ միայն աշակերտները գացեր էին: Տիբերիայէն, սակայն ուրիշ նաւակներ եկան մօտ այն տեղին, ուր հացը կերեր էին: Բազմութիւնը երբ տեսաւ որ ո՛չ Յիսուս եւ ո՛չ ալ աշակերտները հոն էին՝ լեցուեցան նաւակներուն մէջ եւ գացին Կափառնաւում, Յիսուսը փնտռելու: Երբ գտան զինք ծովուն միւս ափին վրայ, հարցուցին. «Ռաբբի, ե՞րբ հոս եկար»: Յիսուս պատասխանեց անոնց. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, կը փնտռէք զիս, ո՛չ որովհետեւ նշաններ տեսաք, այլ, որովհետեւ հաց կերաք ու յագեցաք: Գացէ՛ք աշխատեցէք, ոչ թէ կորնչական կերակուրին համար, այլ այն կերակուրին, որ կը մնայ յաւիտենական կեանքին համար եւ զոր Մարդու Որդին պիտի տայ ձեզի, որովհետեւ ինքն է, որ Չայր Աստուած իր կնիքով հաստատեց»: Չարցուցին իրեն. «Ի՞նչ պէտք է ընենք Աստուծոյ գործերը կատարելու համար»: Յիսուս պատասխանեց. «Այս է Աստուծոյ գործը. հաւատացէք Անոր, որ ինք զրկեց»: Անոնք ըսին. «Ի՞նչ նշան կ'ընես, որպէսզի տեսնենք եւ հաւատանք քեզի: Ի՞նչ գործ կ'ընես: Մեր հայրերը անապատին մէջ մանանան կերան, ինչպէս որ գրուած է Սուրբ Գիրքին մէջ. Երկինքէն եկած հաց տուաւ անոնց ուտելու»: Յիսուս պատասխանեց. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Մովսէս չտուաւ ձեզի երկինքէն եկած հացը, այլ Չայրս է, որ կու տայ



ձեզի երկինքէն եկած ճշմարիտ հացը: Որովհետեւ Աստուծմէ եկած հացը, ան է որ երկինքէն կ'իջնէ եւ կեանք կու տայ աշխարհի»: Այն ատեն անոնք ըսին. «Տէ՛ր, միշտ տուր մեզի այն հացը»: Յիսուս պատասխանեց. «Ես եմ կեանքի հացը, ով որ ինծի գայ, երբեք պիտի չաւօթենայ, եւ ով որ ինծի հաւատայ, երբեք պիտի չծարաւնայ: Բայց արդէն ըսի ձեզի, թէ կը տեսնէք զիս ու չէք հաւատար ինծի: Ամէն անոնք, զորս Չայրը ինծի կու տայ, ինծի կու գան, եւ ով որ ինծի գայ՝ դուրս չեմ հաներ զինք, որովհետեւ երկինքէն իջած եմ՝ կատարելու համար ո՛չ իմ կամքս, այլ՝ կամքն անոր, որ զիս զրկեց»:

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ

«Կեանքի Յաց»

Սիրելի ընթերցող,

Այս շաբթուան աւետարանի պատգամը՝ մեր մտքերուն, սրտերուն ու հոգիներուն աչքերը կը բանայ դէպի գերագոյն արժէք մը, ուր կը տեսնենք Աստուծոյ մեզի հետ մնալու ծրագրին



յաւերժութիւնը:

«Ես եմ կեանքի հացը» (Յովհ. 6, 35): Տիրոջ այս կեանքի կանչող խօսքերը մեզի կը ներկայացնեն մէկ իրականութիւն, թէ Տէրը մարդս ստեղծելէն ետք չ'ուզեց զինք առանձին ձգել, մեղք գործելէն ետք անգամ գայն չլքեց, որովհետեւ շատ սիրեց մարդ արարածը:

Ան արտայայտեց իր յաւիտենական սերը հանդէպ մարդուն, անոր մատուցանելով ամենագեղեցիկ նուէրը, իր անձը՝ Սուրբ Յաղորդութեան մէջ:

Ով սիրելի հաւատացեալ,

Դուն ալ քու սրտիդ մէջ դրոշմէ այս գեղեցիկ ճշմարտութիւնը, որ Տիրոջ քու հանդէպ ունեցած սիրոյն արտայայտութիւնն է «Ես եմ կեանքի հացը» (Յովհ. 6, 35):

Մեծ ջերմեռանդութեամբ մօտեցիր այս վսեմ եւ կեանքի կանչող խորհուրդին եւ գիտցիր որ կեանքի դժուարութիւններուն դիմաց երբեք առանձին չես:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՏԻՈՅ ԺՈՂՈՎՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Նախագահութեամբ՝
Ամենապատիւ եւ Գերերջանիկ
S. S. Գրիգոր Պետրոս Ի.

Կաթողիկոս Պատրիարքի Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

«ՏՕՆԱՀԱՆԴԵՍ ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑ»

Պատգամախօսութեամբ՝
Մեծարգոյ Տիար Աւետիս Կիտանեանի՝
Լիբանանի Զքօսաշրջութեան Նախարար

Մասնակցութեամբ՝ **Արծիւեան ու Բլբուլ Երգչախումբերուն՝**
Ղեկավարութեամբ՝ **Պրն. Մանուէլ Քէշիշեանի**

Զորեքշաբթի, 22 Փետրուար 2017, երեկոյեան ժամը 8:00-ին,
«Յովհաննէս Պօղոսեան» թատերասրահին մէջ, Պուրճ Համուտ:

Tel.: 01/ 570 559 - Fax: 01/ 570 558 e-mail: eparchy@armeniancatholic.org
www.armeniancatholic.org